



Հայ-Օսմանական Յարաբերություններուն Շուրջ Հարցազրոյց՝ Լուսինէ Սահակեան Հետ

0 Գաղութային November 5, 2015

PRINT EMAIL A- A-



Երկուշաբթի, 2 նոյեմբեր 2015-ին, «Ազգակ»-ի «Արսէն Չաղլասեան» ժողովասենեակին մէջ տեղի ունեցաւ հարցազրոյց՝ Երեւանի պետական համալսարանի Հայագիտական հետազոտություններու հիմնարկի հայ-օսմանական յարաբերություններու բաժանմունքի ղեկավար Լուսինէ Սահակեանի հետ: Հայ-օսմանական յարաբերություններուն շուրջ հարցազրոյցը վարեց «Ազգակ»-ի միջազգային լուրերու խմբագիր Վահրամ Էմմիեան:

Խօսելով Օսմանեան կայսրութեան պատմութեան ընթացքին հայ ժողովուրդը Միլլի Սըտիք (հաւատարիմ ժողովուրդ), ռայա եւ կեաւուր նկատուելու երեւոյթին մասին՝ Լուսինէ Սահակեան յայտնեց, որ խնդիրը պէտք է դիտել Օսմանեան կայսրութեան քաղաքականութեան եւ այն իրողութեան ծիրին մէջ, որ կայսրութիւնը քրիստոնէութեան հակոսնետայ դիրքի վրայ էր: Ան նշեց, որ կեաւուր հասկացողութիւնը կու գայ Օսմանեան կայսրութեան սկզբնական շրջանէն: Քրիստոնէաները կայսրութեան մէջ կազմած են մեծամասնութիւն, ուստի կայսրութեան առջեւ դրուած էր զանոնք իսլամներով հակակշռելու հարցը, իսկ աստոր ամենէն տարածուած ձեւը քրիստոնէաներու բռնի իսլամացումն էր: Ինչ կը վերաբերի «Միլլի Սըտիք»-ի հանգամանքին, ասիկա կ'օգտագործուի թուրք պատմաբաններու կողմէ՝ ցոյց տալու համար, որ հայերը լաւ վերաբերմունքի կ'արժանանային, սակայն հետագային երախտամոռ դարձան եւ արտաքին ուժերու հետ դաշնակցեցան:

Ինչ կը վերաբերի իսլամացման երեւոյթին, Սահակեան յայտնեց, որ այդ երեւոյթը կը բաժնուի երեք հանգրուաններու՝ 15-16-րդ դարուն թուրք-պարսկական պատերազմի շրջան, 17-րդ դարու առաջին կէսէն 19-րդ դարու առաջին կէս՝ ռուս-թրքական տագնապի ժամանակ, իսկ 3-րդ հանգրուանը՝ 19-րդ դարէն 20-րդ դարու կէսերը:

Սահակեան նշեց, որ համշէնահայերու իսլամացման գործին մէջ մեծ դեր ունեցած են իսլամացած յոյները, եւ այդ պատճառով ալ համշէնցիներուն մօտ գոյութիւն ունի անոնց նկատմամբ որոշակի վերապահութիւն: Ան արեւցուց, որ Օսմանեան կայսրութեան մէջ հայերէն խօսելու «յանցանքին» համար կը կտրէին մարդոց լեզուները, իսկ համշէնցիներուն պարագային հայերէն 7 բառ արտաբերելը կը նկատուէր հայիոյութիւն:

Հարցազրոյցին տեսերիզը յառաջիկայ օրերուն պիտի տեղադրուի «Ազգակ»-ի կայքին, ինչպէս նաեւ հայրենի «Նոյեան Տապան» լրատու գործակալութեան կայքին վրայ:

»